


891.71


q-99



211. 686
911
Ն. ԳՈՒՐՎԻԶ

ՅԵՐԵՎԱՆԻ ԱՅՍՈՐ

(ՄԱՐԴԸ ՓՈԽՈՒՄ Ե ԿՅԱՆՔԸ)



507/72

ԲԱԳՈՒ - ԿՈՒՍՏԱՆՍ - 1933

Արմ.
12-31462

Ն. ԳՈՒՐՎԻԶ

Am-686
27 AUG 2006

891.71
9-99

2-31462

10 IV 2010

ՅԵՐԵԿ ՅԵՎ ԱՅՍՈՐ

(Մաղըր փոխում է կյանքը)



ԿՈՅ. № 22628

ԲԱԳՈՒ—ԿՈՒՍԶՐԱՏ.—1933

27 MAR 2013

10955



40068-63

Կազմեց Հ. Ամիրխանյան, խմբագրեց Հ. Բաբլումյան,
թողարկու և սրբագրեց Ա. Արևան.

Baş Mətbuat Mədirliyi Məvəkilliyi № 7060. Sifariş № 1463 Tiraz 2000. Firqənaşr № 83. İstehsalatı verilmiş 10-XII—33. Capa verilmiş 23-XII—33. Cap listi 1. Kağız formatı 72×105. Nuruflatların qadağı—43872. Azərnəşr məvəsinədə basıldı. Bakı, Əli Bəyramov küçəsi "26-lar adına" "Kitab Sarajı".

ՅԵՐԵԿ ՅԵՎ ԱՅՍՈՐ

ՄԱՐԴԸ ՓՈԽՈՒՄ Ե ԿՅԱՆԲԸ

Այս տունը գտնվում է 2 կիլոմետր յերկարություն ունեցող միանգամայն նոր փողոցի վրա:

Գլխավոր մուտքը պատված է վայրի խաղողենու վորթերով: Յես բարձրացա լայն սանդուխներով, մոտեցա սպիտակ, բարձր դռներին և սեղմեցի ելեքտրական զանգի կոճակը:

Դուռը բաց արեց մի վոչ յերիտասարդ կին, հագին կանոնավոր կարված սևադույն բրդի հագուստով: Մաթի պես սև մազերը խնամքով մկրատված էին: Նրա մեծ աչքերը նայում են ինձ միանգամայն հանգիստ, կարծես ուզելով մի բան հարցնել:

— Ու՞մն եք ուզում, վերջապես հարցրեց նա:

— Ինձ անհրաժեշտ է տեսնել ընկ. Մահմեդ Շյուքյուրին. նա այստեղ է ապրում:

— Այո, նա այստեղ է ապրում, մտեք, ընկ. Մահմեդ Շյուքյուրը տանն է:

— Համեցեք, համեցեք, հրավիրեց բնակարանի տերը, մտեք այս սենյակը նստեցեք: Յես հիմա կվերադառնամ: Յես հենց նոր վերադարձա հերթափոխությունից և դեռ հագուստս չեմ փոխել:

Յես մտա սենյակ և նստեցի խոշոր կաղնու սեղանի մոտ դրված վեննական աթոռի վրա: Այդ տեղ արդեն նստած էին ընկ. Շյուքյուրի մյուս հյուրերը: Սեղանը ծածկված էր մախմուրե ծանր ծածկոցով:

Դռների վրա կախված են քաթանի ուլալյաձ վարագույրներ, վորոնց յեղրերը զարդարված են զմրուխտազույն կերպասի լենտերով: Մի սեղանակի վրա դրված է պատեֆոնը, մյուսի վրա ռադիո-բարձրախոսը: Նրանց միջև դրված է զրասեղանը, իսկ նրա վրա գրենական պիտույքներ, զրչակոթներ, մատիտներ, քանոն, չափակարկին լեկալներ, գրվածքներ և զրքեր: Գրասեղանի կողքին կանգնած է զրքերով ծանրաբեռնված հոտաժերկան: Այստեղ են և լենինը և Ստալինը, խորհրդային փոքր բառարանի հատորները, ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի դասագրքեր: Հրաշալի ապակեպատ բուֆետը լցված է հախճապակյա և ապակյա ամանեղենով: Պատերի վրա փայլում են առաջնորդների նկարները, լուսանկարներ: Դիվանի վրա փռված է պարսկական գորգը:

Անգղույշ շարժումով յետ արմունկով դիպա ծաղկամանին:

Աշնանային թույլ թերթիկները ցրվեցին հատակի վրա:

Տանտիրուհին կռացավ խնամքով հավաքեց թափված թերթիկները և խոհանոց տարավ: Յես վայր նայեցի, ներկած հատակին, վորի վրա տարածված են դարդանկարներով գործված կարպետներ, յես վոչ մի կտոր կեղա և փոշի չտեսա: Տանտիրուհու այդ վարմունքը ինձ հիշեցնում է մի ուրիշ դեպք, վորը տեղի ունեցավ ընդամենը 10 տարի սրանից առաջ: Այդ ժամանակ յես ապրում էյի քաղաքի լեռնային մասում, վերին-կաղերշչինսկի փողոցի վրա, մի բակում, վորտեղ բնակվում էյին թուրք բանվորներ:

Նրանք ապրում էյին մութ, պատուհաններ չունեցող վանդակներում:

Ինձ պետք յեղավ լինել հորափոր վարպետ Ալեքսեյովի մոտ: Նա տանը չեր:

Նրա կինը, վորը յերբեք իր յերեսից չադրան չեր իջեցրել—վորովհետև բակում ոտար տղամարդիկ շատ կային—գետնի վրա տան մուտքի մոտ ճաշ եր պատրաստում:

Վանդակում վոչ մի կահ կարասի չկար: Պատի պահարանի խորքում դարսված էյին կեղտոտ ու պատարոտած վերմակներ, իսկ վանդակի մեջ տեղում ծխում եր մանդալը:

Կեղտոտ, լաթերով ծածկված մանուկները սողում էյին մոր շուրջը:

Կինը ձեռքի մի շարժումով հեռացրեց յերեսային և անգղուշորեն նրա ձեռքը ընկավ կողքի աղբակույտի մեջ: Նա ձեռքը սրբեց յուղոտված կեղտոտ անգրավարտիկով, այդ նույն ձեռքով քիթը սրբեց և հան գլխտ շարունակեց ճաշ պատրաստել:

Յես հիշեցի, թե ինչպես այդ կինը և նրա հարևանները բակի կենտրոնում դանված կեղտոտ ջրեր ներարկող փոսի մոտ շորեր էյին լվանում, ինչպես ջաղուները մեծ անմաքուր ասեղով նրանց յերեսաներից այրուն էյին վերցնում, հիշեցի, ինչպես կանայք չաղբաների տակից վախկոտորեն ամեն մի րոպե իրենց շուրջն էյին նայում, կարծես սպասում էյին մարակի հանկարծակի հարավածի:

Այս բոլորը յես մտաբերեցի լայնարձակ ու լուսավոր, խոհանոցում, գազի խշշոցը լսելով, խոհանոցում, վորտեղ ընկ. Շյուքուրի կինը խոշոր գազային պլիտայի վրա եմալե և ալյումինե ամանների մեջ ճաշ եր պատրաստում:

ԱՄԻՐԱՆԻ ԴՊՐՈՅԻՑ-ՄԻՆՉԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԱ

Պատից նայում և իլլիչի ժպտացող նկարը: Նա գոհ եր նրանով, վոր սենյակում կանգնած և ետափերկան գրքերով ծանրաբեռնված, վոր գրասեղանի վրա պառկած են ուսումնական պիտույքներ, վոր բնակարանի տերը և նրա հյուր Մուրադովը սովորում են:

Մուրադովի հայրը հանքում աշխատել և 13 տարի և մեռել մութ, անգրագետ, մեռել և վորպես մոռացված մի մարդ:

Նրա չորս յերեսներից զրեւ ու կարգաւ սովորել և միայն Յուսուֆը:

Նա սովորել և Ամիրաջանի դպրոցում, վորը կառուցված եր ինքնակամ նվիրատուություններով:

Ու՞մ գումարներով եր կառուցվել այդ դպրոցը.— բանվորների, գյուղացիների, բայց վոչ հարուստների:

Միլլիոնատեր Մուխտարովը, վոր Ամիրաջանում մեծ Մեչիդ եր կառուցել, այդ դպրոցի շինարարության համար անգամ մի կոպեկ չեր տվել:

—Մուսուլմանն ինժեներ դառնալ չի կարող.—ասել և նա,—դա նրա գործը չի, նրան դպրոց պետք չի:

—Յես աղքատ էլ մնամ հայտարարել և հորափոր Հաջի Վաֆան, բայց ինձ նման բանվորների յերեսները կսովորեն դպրոցում և դըպրոցի շինարարությանը նվիրել և իր տարեկան աշխատավարձի կեսը: Յերեսուն յերեսների համար դպրոցի բացման որը Ամիրաջանցիների համար մեծ տոն եր, դպրոց, վորտեղ յերեսները պետք և գրաճանաչություն ու աղթել սովորեցին, վորտեղ աղջիկների մուտքը արգելված եր:

Յուսուֆ Մուրադովը, այդ յերեսան յերջանիկներից մեկը յեղավ, սակայն նա սովորեց միայն մի ձմեռ, կարիքը նրան քչեց հանք, աշխատելու:

Վորպեսզի իր ժամանակին աշխատանքի վայրը հասներ, նա ստիպված եր վեր կենալ գիշերվա ժամը 3-ին: Տնից մինչև աշխատանքի տեղը հասնելու համար, նա պետք և ամեն որ վտույթով կտրեր անցներ 12 կիլոմետր: Դրա համար պահանջվում եր 6 ժամ: Յեվ ծանր աշխատանքից, 6 ժամ անընդհատ ճանապարհ կտրելուց հետո սովորելու համար վոչ հնարավորություն եր մնում և վոչ ել ժամանակ:

Միայն Ադրեջանի խորհրդայնացումից հետո, նա սկսեց իսկապես սովորել:

Հենց վոր բացվեցին անգրագիտության վերացման կուրսերը, Յուսուֆը առաջինը սկսեց յեռանդով վերացնել իր անգրագիտությունը այդ կուրսերում:

1924 թվին Յուսուֆ Մուրադովը առաջինը սովորեց նոր այբբենը, ապա տարի ու կես սովորեց հորափորման կուրսերում և յերեք տարի յեւ անասավարժների կուրսերում:

Բայց Յուսուֆը դրանով չբավականացավ:

Մեծ ընտանիքը ու միաժամանակ սովորելու և աշխատելու դժվարությունը չկանգնեցրին նրան. 1932 թվին նա մտավ արդյունաբերական ակադեմիա:

1933 թվի հուլիսին ընկ. Մուրադովին հանեցին սովորելուց և ուղարկեցին Կալա, վորպես հորափոր վարպետ: Ընկ. Մուրադովը չառարկեց:

—Ներկայումս մեղ մոտ հորափոր վարպետներ քիչ կան, անհրաժեշտ և 300 նոր հորեր փորելուսաց նա կնոջը:

Սովորել հետո յեւ կարելի յե, խորհրդային իշխանության ժամանակ ակադեմիան ինձանից չի փախչի:

Սա հին ժամանակները չի, յերբ յես ցանկանում եյի ընդունվել Սարունչու յերկաթայան դարոցը, քննություն տվեցի, ինձ չընդունեցին:

Մուրադովը միայն ինքը չի սովորում:

Նրա աղջիկը, 18 տարեկան Ռուզիան վերջացրել է 7-ամյակն ու ֆարգործուսը և մտել բժշկական ֆակուլտետ:

— Ցանկանում եմ, վոր նա աչքի բժիշկ դառնա, ասում է ընկ. Մուրադովը:

— Բանվորներից և կուլտուրիկներից շատ շատերը տառապում են աչքացավով, մուզիան կբժշկի նրանց:

— Բժիշկ, թրքուհի բժիշկ-ծրծաղեց սեղանի մոտ նստած հին նավթագործ Մանմեդ Շյուքրուրը: Յես մինչև խորհրդային իշխանության հաստատվելը չգիտեյի թե ինչ է բժիշկը:

Մեզ բժշկում էյին մոխրով, ածուխով, ձիու արտաթորանքի հեղուկով, թալիսմաներով: Տղետ պառաջները այրուն էյին առնում, ինչպես այդ անում են ձիերի հետ, իսկ յեթե մեռնում էյին, վոչ վոր հաշվի չեք առնում թե ովքեր և ինչու մեռան:

— Զուրատովի հանքում մի անգամ յես ակնառես յեղա, թե ինչպես խողովակայան իջեցման ժամանակ սպանվեցին 2 բանվորներ:

Նրանցից մեկի այրին յեկել էր հանքատիրոջ մոտ ոգնություն խնդրելու: Սակայն տերը նրան վռնդեց:

— Քո տամուսինը սպանվել է իր անդդուշության պատճառով: Յես մեղավոր չեմ:

Մարդ չկար, վորին բողոքեր անապաստան ու քաղցած կյանքի ճանկերն ընկած այրին:

Յես ինքս աշխատում էյի սայլակի վրա, ձեռքերս ուռել էին:

Գնացի հանքատիրոջ մոտ և ասում եմ

— Ինձ ուրիշ աշխատանք տուր: Զեռքերս ուռել են, սայլակ քաշել չեմ կարող:

— Յերկար ժամանակ է, վոր քո ձեռքերը ուռած են հարցրեց նա:

— Արդեն յերբորդ ուրն ե: Նա կանչեց գարծակատարին և հրամայեց ինձ արձակել աշխատանքից:

— Միայն չմոռանաս նրանից յերեք որվա աշխատավարձը պահել: Նա այդ որերին վատ է աշխատել, նրա ձեռքերը ցավացի են— այսպես հրամայեց հանքի տերը իր պոծկատարին:

Մի փաստաբան ինձ հորդորեց դատարանին դանգաժ տալ հանքատիրոջ վրա և ինձանից 5 ռուբլի վերցրեց միայն այն բանի համար, վոր մի գիմում գրեց: Բայց դատարանում դատավորները ինձ վրա միայն ծիծաղեցին:

ՅԵՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՅԵՎ ՎՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՋ ԴԵՄ ԵՅԻՆԵ

Խոսակցությանը խոնավեց ներկա գտնվող հին մեքենավար, դուռտարար ընկ. Դավթյանը:

— Բայիլովում կար Կոստրայիվ անունով մի վերահսկիչ վոստիկան:

Նա ատելով ատում էր բանվորներին, հատկապես թուրք բանվորներին:

Մի անգամ յես ընկերների հետ միասին գնացի ման գալու: Ինչ վոր տոն որ եր: Մենք մաքուր հագնված էյինք: Նա մոտեցավ մեզ և սկսեց մի քանիսին մտրակով ուժեղ հարվածել:

— Զերդ մեծություն ինչի համար եք ծեծում, ցավից ու զայրույթից լացուկամած հարցրի յես:

— Զխոսել: Ցրվեցեք: Զհամարձակվեք փողոցում ման գալ և խոսել գոռաց նա-յես գիտեմ թե դուք ինչի մասին եք խոսում:

Վոչ միայն ոտարին, այլ և սեփական ընկերոջը չեք կարելի վորեք բան փստահել: Մարդիկ վախենում էյին մեկը մյուսից: Տասը ռուբլու համար մարդ էյին սպանում: Բանվորներից խլում էյին գեղեցիկ կանանց և վաճառում էյին հարուստներին: Ժամը 6-ին արդեն Բայիլովում ման գալ չեք կարելի: Մեզ սպանում էյին, ասելով, վոր հայերը մորթոտում են մուսուլմաններին, իսկ փաստորեն մարդկանց սպանում էյին վոչ թե հայերը, այլ ցարական դատարանի և վոստիկանության կողմից փայտված ավաղակներն ու ղոշիները:

— Մեզ վրա գոռում էյին, բայց պետք էր լռել, շարունակում է ընկ. Դավթյանը: Ծեծում էյին, բայց պետք էր լռել, հայհոյում էյին, պետք էր լռել, ստիպում էյին շատ աշխատել, պետք էր լռել և աշխատել: Իսկ ինչ կարելի յեր ասել: Ահա թե ինչպես յես սկսեցի աշխատել: Յես հովիվի վորդի յեմ: Յերբ հայրս ապրում էր մենք մի կտոր հացով աղահովված էյինք, բայց նա մեռավ և մեր դրությունը վատացավ, յեղբայրս ինձանից փոքր, մայրս հիվանդ:

— Ավետիս դառնալով ինձ ասաց մայրս-մինք հաց չունենք, կով չունենք, հող չունենք, ինձ ել ուժ չունեմ: Դու արդեն փոքր չես, 13 տարեկան ես, գնա Բագու և մտիր աշխատանքի մի կտոր հացի համար, բալքյամ մեզ համար ել մի ձոր կանես:

— Լավ հիշիր վորդիս-վոչ վոքի չբարկացես, բոլորին լսիր և համբերիր, թե չե ասոված վոչ տա կմեռնես սովից:

Բագվում ծանոթները ոգնեցին ինձ աշխատանք գտնել:

Ավետիսը 3 տարի շարունակ անվճար աշխատեց վորպես փականագործի աշակերտ, իսկ հետո նրան ոգնական դարձրին և նշանակեցին ամսեկան 12 ռուբլի աշխատավարձ: Հենց առաջին ստացածից նա մորը մի քիչ փող ուղարկեց, բայց փաստը փողը հետ ուղարկեց: Հայրենակիցը յեկավ և պատմեց, վոր մայրն ու յեղբայրը սովից մեռան:

— Յես տերերի համար աշխատել եմ ամբողջ 34 տարի: Միշտ աշխատել եմ առանց ուժերս խնայելու, բայց վոչ վոր, վոչ մի անգամ շնորհակալություն չի ասել: Իսկ խորհրդային իշխանության որոք ինձ պարգևատրեցին Լենինի շքանշանով, այնպիսի հրաշալի բնակարան տվին, վորի նմանը յես կյանքումս չեյի տեսել: Ներկայումս յես ապրում եմ այդ սենյակներում, կարծես ամառանոցում լինեմ և սրտանց ուրախանում եմ, յերբ իմ յերեխաները լավ են սովորում, կրթություն

են ձեռք բերում ու խելոք մարդիկ դառնում: Յես ինքս չորս գյուղս եմ արել և հետագայումն ել պետք է աշխատեմ ելի շատ ու շատ գյուղս եր տներ, իսկ տղաս շուտով ինժեներ ե դառնում:

ՓԻՐԻ ՆՈՒՐԻՅԵՎԸ ՎԵՐԿԻՇՈՒՄ Ե

—Ասում են հացն եփան եր, ասաց 70 տարեկան հորափոր վարպետ Փիրի Նուրիշվիլը: — Բայց շատ էնք մենք տեսել այդ եփան հացից: Հայրս Գրիգորյանում ուրիշների փոխարենն եր արածացնում: Նա շատ հազվադեպ եր տուն գալիս:—Մի ագամ ել նա վերադարձավ հիվանդ, փոսները ուռած: Մայրս հեքիմ կանչեց: Նա հորս ինչ վոր բան տվեց խմելու, նրա առողջությունը բուրդովին վատացավ դրանից:

Յեկավ մի ուրիշ հեքիմ, արյուն առավ իսկ արյան հոսանքը կանգնեցնել չկարողացավ: Այդպես ել արյունաքամ յեղավ և մեռավ հայրս:

—Մենք վորք մնացինք: Հարևան կուլակ Բյալբալին պարտքի դիմաց խլեց մեր վերջին այծը: Մայրս նրա մոտ աշխատում եր: Նա նրանց համար հաց եր թխում, կարում եր, մաքրում, լվանում: Դրա համար նա ստանում եր որական մի հաց: Գիշերները թեկ եր մանում ու փալաս գործում, կես տարում կործներ մի փալաս և կծախեր 10 կամ 12 ուռելով: Յես միշտ քաղցած ելի միում: Իսկ յերը տեսնում ելի թե ինչպես հարևան կուլակի տղաները ցորենի լավաջ ու փլավ ելին ուտում արցունքը հոսում եր աչքերիցս:

Մայրս աշխատանքի յեր գնում, իսկ յես փողոցներում թրիվ դալով ուտելիքների մնացորդներ ելի փնտռում: Տասներկու տարեկան հասակում յես աղյուսի գործարանում աշխատանքի մտա: Վարպետները համար ավագ ու կավ ելի կրում: Աշխատանքը սկսում եր վաղ լուսաբացին և վերջանում ուշ գիշեր: Վարպետները վրա ելին տալիս—«շուտ արան, շուտ արան» քաշում ելին ականջներս, ծիծաղում ելին:

Մեծի մասին վերհիշելիս ծեր Նուրին կնճռոտվում եր ու դողդողում ամբողջ մարմնով:

—Մի տղա ընկավ ավաղի հորը—շարունակում ե Փիրին: Նրան թաղեցին ավաղների մեջ: Նրա փոխարեն ուրիշ վարձեցին, դեռ հորից նրան մեռած դուրս քաշելուց առաջ:

Այդ ազատ տեղի համար յերեխաները, վորոնք հավաքվել ելին այստեղ սկսեցին կռվել:

Մի անգամ յես ընկա ավաղի հորը և այնպես վախեցա, վոր իմ տեղը ուրիշ կարող են վերցնել, մինչև իսկ մոռացա ցավի մասին և հենց վոր բերանս ազատվեց լցված ավաղից գոռացի—

—Վարպետ, վարպետ, յես կենդանի յեմ, իմ փոխարեն ուրիշին չընդունես: Յես հիմա նորից կսկսեմ աշխատել: Յես կենդանի յեմ:

Յերկու տարի Փիրին աշխատեց գործարանում: Հետո տիրոջ գոծերը վատացան: Նա գործարանը փակեց և արձակեց բանվորներին: Փիրին մնաց գործազուրկ:

1887 թվին, յերբ լրացավ նրա 13 տարին, նա արդեն աշխատում եր հորափորների խմբում:

Այստեղ վարպետները ավելի սոսկալի ելին ծեծում քան աղյուսի գործարանում: Այդ ժամանակ հորափոր վարպետներ ելին շվեդացիներն ու անգլիացիները: Նրանք բանվորներին չեյին հասկանում և բանվորները նրանց: Յեկ նրանք բանվորների հետ բռնկեցրով ու փայտով ելին խոսում:

Յերկու տարի Փիրին աշխատեց մի բուրավոյում: Հարվածային հորափորում դանդաղ եր առաջ գնում, մի քանի տարի մի հոր ելին փորում: Փիրուն բուրգից տեղափոխում են դարձնոց, փուքս փչելու համար: Յերեք տարի շարունակ նա աշխատեց վորպես փքսահար, ապա նրան դարձնում են դարձնի ոգնական: Աշխատում ելին յերկու հերթով: Մի շաբաթ ցերեկով ելին աշխատում մի շաբաթ գիշերը: Հերթի «փոփոխման» դեպքում՝ գիշերից ցերեկ և ընդհակառակը պետք եր լինում աշխատել 18 ժամ անընդհատ: Դրանով դարձնոցի տերերը շաբաթական շահում ելին մի ամբողջ հերթի աշխատանք:

Բոլորովին պատահականորեն ինժեներ Դարոշենկոն ուշադրություն ե դարձնում մտածկոտ ու ճարպիկ Փիրու վրա և նրան սովորեցնում ե սուսերին կարգալ գրել ու տեղափոխում և լաբորատորիայում աշխատելու:

Այդպես նա աշխատում ե մինչև 1886 թվի: Բայց այդ թվին ճգնաժամ յեղավ—նավթարդյունաբերողները ավելի նավթ ելին հանել, քան հնարավորություն կար վաճառելու: Տեղ չկար նավթը տեղափոխելու: Մանր նավթարդյունաբերողները սնանկացան և չվճարեցին մինչև իսկ բանվորներին հասանելիք աշխատավարձը: Իսկ խոշորները աշխատանքը կիսով չափ կրճատեցին: «Նեկթ» ընկերության հանքում աշխատող 500 բանվորներից, վորտեղ և Փիրին եր աշխատում, մնացին 200 հոգի, Դարոշենկոն չեր ցանկանում Փիրուն արձակել, բայց այդ դեպքում նա ստիպված կլինեք հեռացնել Փիրու մյուս յեղբորը, վորը ընտանիքի տեր եր ու անդրադեպ, և Փիրին նրան ասեց.

—Յես այդ վիշտը ինձ վրա յեմ վերցնում: Դու մնա, աշխատիլ այստեղ, իսկ յես կգնամ ուրիշ տեղ մի կտոր հաց փնտրելու:

Նա յերկար գործազուրկ ման յեկավ, մինչև վոր աշխատանքի ընդունվեց Լենցի հանքահորը: Նավթարդյունաբերողները գրազետ բանվորներին ուղարկում ելին բուրգերը, վորպես պրակտիկաններ: Պրակտիկանների թվում ընկավ և Փիրին, վորպես սուսերին կարգալ գրել խմբից: Չորսամյա պրակտիկայից հետո, նրան նշանակեցին հորափոր վարպետ ամսական 60 ուռլի աշխատավարձով:

Բայց բախտը նրան յերկար չժպտաց: 1892 թվին Բագվում տարածվեց խոլերայի համաճարակը:

—Սորերդային իշխանության ժամանակ բանվորներն ու գյուղացիները բժշկական ոգնություն են ստանում, Բագվոհուրդը հոգում ե, քաղաքի մաքրություն համար, իսկ այն տարին ամենուրեք կեղտոտություն եր:

Կազարմաներում մարդիկ քնում եյին չոր հատակի վրա, առանց անկողնու: Լվացարաններ չկային: Անկողնու սպիտակեղեն չկար: Յեթե վորեւէ մեկը իր աղայն ու բարձն եր հետը բերում, գողանում եյին հենց առաջին դիշերը: Յեւ յերբ խոլերան ներս խուփեց այդ կազարմաները, վոչ վոքի համար այլևս փրկություն չկար: Հանքատերերն ու կապալառուները դրամները գրպանը դրած գնացին Բագվից, իսկ բանվորները մեռնում եյին անողնակա: Այնքան ռաս բանվորներ մեռան, վոր համեմատ աբխասները ամբողջովին դադարեց:

Խորեբայից հետո, Փիրին շուտով նորից աշխատանքի մտավ: Նա ավելի շատ աշխատավարձ եր ստանում, բայց յերբեք չեր մոռանում սյուս բանվորների դրութիւնը:

Նրա աչքերի առջև սովահար մեռնում եյին հազարավոր մոռացված, խավար, անգրագետ թուրք բանվորներ:

Նրանց հնարավորութիւնն չեյին տալիս սովորել, հնարավորութիւն չեյին տալիս վորակավորվել: Ծանրութիւններ քաշ տալ, հոգ փորել, ահա թե ինչ եյին տալիս թուրք բանվորներին անելու: Այդ բոլորը Փիրին տեսել եւ սեփական աչքերով:

Հենց դրա համար ել յես մասնակցել եմ գործադուլներին, չնայած նրան, վոր ինձ լավ եյին վճարում: Յերբ Մոսկվա-Կովկասյան ընկերութեան հանքերում բանվորները գործադուլ հայտարարեցին, դրան մասնակցեցի եւ յես:

Կառավարիչ Բրայիլովսկին կանչեց Փիրուն եւ ասաց.

Մի խառնվիր քաղաքակրթութեանը: Դա քու խելքի բանը չի: Թուաները եւ հայերը քեզ համոզում եյին վոր գործադուլ անես, բայց չե վոր դու Մոսկուլման ես:

—Բայց յես հասկացա, վոր նա վատ բան եր ասում, ճիշտ չեր ասում: Յես շարունակեցի գործի չզնալ եւ ինձ ընտրեցին գործադուլային կոմիտեյի անդամ, վորը հավաքվում եր մեր տանը: Վոստրիկանութիւնը հետեւում եւ ձերբակալում ե Փիրուն: Ձերբակալութեան ժամանակ նրան լավ ծեծում են ու քարշ տալիս վոստրիկանապետ Կոմիտեի մոտ: Մի քանի որ բանտում պահելուց հետո նրան նորից կանչում են վոստրիկանապետի մոտ եւ ստորագրութիւն վերցնում, վոր նա այլևս քաղաքակրթութեամբ չի զբաղվելու եւ բաց թողնեցին, վորովհետեւ հանքատերերը նրա կարիքը զգում եյին:

Բայց մոտենում եր Մայիսի Մեկը. պատմում ե Փիրին. —մարդիկ մայովկայի յեն դուրս գալիս, ճառ են ասում, խոսում են բանվորական գործի մասին: Ինչու չզնալ նրանց հետ, ինչու չպետք ե ինքս ճառ ասել: Չե վոր յես ել եմ բանվոր, ինչ անենք, վոր յես ստորագրութիւն եմ տվել: Յեւ մյուսների հետ յես ել դաշտ գնացի: Մեզ վրա հարձակվեցին զինված կողակները, ծեծեցին մարակներով:

ՅԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՍԱՎԱՌՆՈՐԴ ԴԱՌՆԱԼ.

Այդպես ենք ապրել մենք մինչև խորհրդայնացումը:

—Միայն յերբ յեկավ խորհրդային իշխանութիւնը, նոր իմացա թե ինչ եւ մարդը: Առաջներում ինձ վրա նայում եյին ինչպես անասունի: Յեկավ խորհրդային իշխանութիւնը եւ ասաց, վոր յես մարդ եմ, նա ինձ հարցնում ե, ինչպես կարելի յե կառավարել քաղաքն ու ողութիւնը:

Յես ներկայումս Բագվորդի անդամ եմ: Ապա-գրպանից հանելով ցույց ե տալիս անդամատումը: Յես Փիրի Նուրիյեվս քվեարկում եմ պետական գործերի համար:

—Յեւ ասում եմ յերեսխաներիս. —սովորեցեք յերեսխաներ, շատ սովորեցեք, լավ սովորեցեք: Յեթե լավ սովորեք ձեզ համար լավ կլինի: Ծնորակալութիւնս խորհրդային իշխանութեանը: Նա իմ յերեսխաներին սովորեցնում ե: Բոլորին ե սովորեցնում: Իմ մեծ տղան, Ազիզը մի տարուց հետո ինժեներ կդառնա, բավականութիւնից ձեռքերը շփելով ասում ե ծերունի Փիրին:

Հորափոր Փիրու վորդին, աղքատ, անգրագետ, գրքի մասին գաղափար չունեցող հովիւ թոռ ինժեներ ե դառնալու:

—Իսկ աղջիկս: Ի՞նչ պետք ե անի աղջիկս՝ Սոնան: Ինքն իրեն հարց ե տալիս նա ե պատասխանում.— իմ 19 տարեկան Սոնան սավառնակով թռչում ե յերկնքում բարձր, բարձր, աչքերը առաստաղին բարձրացնելով գոհունակութեամբ շփում ե ճակատը Փիրին:

Նա յերեկ „Վիշկայի“ ե „Յենի Յուլի“ այերո-խմբագրութեան հետ միասին սովառնեց դեպի կոլխոզները, բամբակային դաշտերը: Իսկ ինչ կլինեք նա, յեթե չլինեք խորհրդային իշխանութիւնը: Յերբ նրա 9 տարին կլրանար, հին սովորութեան համաձայն յես յերեկ կծախեյի նրան վորեւէ ծերունու: Նրա փոքրիկ, մանկական գլխի վրա կզցեյին սև չադրան, իսկ 19 տարեկան հասակում նա արդեն կպառավեր, յերեկ ունենալով մի քանի յերեսխաներ:

Յեւ ամին որ ծերունի ամուսինը կծեծեր Սոնային, նա կծեծեր վախից, վոր նա չմոռանա ամուսնուց վախենալ, վոր նրա շուքը Սոնայի գլխից անպակաս լինի: Յես այլ բան անել չեյի կարողանալու: Յես նրան սովորելու ուղարկեյի, նրան կսպանեյին քարկոծելով ե դրա համար կսպանեյին ե ինձ:

Սոնան վերջացրեց 7-ամյակը, ֆաբրիկուսը:

—Վորտեղ ես սովորելու Սոնա հարցրի նրան մի անգամ:

—Յես ընտրելու յեմ ամենա բարձր դպրոցը ծիծաղում ե աղջիկս. —այնպիսի բարձր, վոր յես բոլորից բարձր լինեմ, բարձր հին ծուռ ու մուռ փողոցներից:

Յես չհասկացա թե ինչ ասաց Սոնան:

Յես մտածեցի, վոր նա բանվորական տղանում ապրել չի ցանկանում: „Մենք նոր տներում ենք ապրում“. ասեցի յես: Բայց մի քանի որից հետո նա յեկավ ե ասում ե. —

—Հայր, յես մտել եմ սավառնորդների դպրոցը, յես ցանկանում եմ սավառնորդ դառնալ:

Յես վախեցա: Մթթե սավառնակով թռչելը դա կանանց գործն է:

—Աղջիկս—ասում եմ նրան, կարող ես դու արդյո՞ք սավառնակով թռչել:

—Այո հայրիկ, յես կարող եմ սավառնակով թռչել: Յես ցանկանում եմ, վոր թրքուհիները նայեն ինձ, վոր նրանք ել ցանկանան թռչել:

Յեվ իմ Սոնան սավառնորդ դարձավ: Ահա, նայեցեք-քաղցր հուզմունքով Փիրին ցույց ե տալիս աղվա լուսանկարը:

—Նա շատ ակտիվ է, նա ներկայումս սավառնում է Աղջարեղու բամբակային դաշտերում, նա աղիտացիա յե անում կոխողներին շարքերում, վոր նրանք ավելի շատ բամբակ հավաքեն:

ԱՆՆ. ՆՈՐ, ՄԵԾԱԳՈՒՅՆ ՈՐԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, ՆՐԱՆՑ ԿԵՆԴԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ:

ՄԻՆՉՅԵԼ ՉԱՎԱՐՏԵՆԳ ՅԵՐԿՐՈՐԴ ԿՆԳԱՄՅԱԿԸ...

Յեվ ծերունին գեռ յերկար խոսեց:

—Փոքր տղաս Կավուդն ել է սովորում: Նա 8-րդ խմբումն է: Ամենից փոքր աղջիկս Ռուզան ել է սովորում նա 4-րդ խմբումն է: Բոլորը սովորում են: Իսկ յես աշխատում եմ: Յես ցանկանում եմ յերեխաներին ցույց տալ թե ինչպես պետք է աշխատել: 57 տարի յե արդեն ինչ յես աշխատում եմ: Խորհրդային Իշխանությունը ինձ տարգելատրել է մեծ, պատվավոր պարգևով Լենինի շքանշանով — Շնորհակալ եմ նրանից:

Ինձ մարդիկ ասում են. «Փիրի 70 տարեկան ես, բավական ե, հանգստացիր: Խորհրդային Իշխանությունը քեզ լավ կենսաթոշակ կտա»: Բայց յես աշխատանքը թողնել չեմ ցանկանում: Յես գեռ կարող եմ վորել: Յես աշխատում եմ Կալայում 61-րդ բուրգում: 620 մետր խորություն եմ անցել չնչին թեքումով: Յերկարամիտ եմ բոլորում յերեկ ինձ հարցրին:

—Փիրի, դու գլխես ինչպիսի ծուռ կա քու հորում—ընդամենը 10 բուրգ ու 1/3 աստիճան, քո հորը ուղիղում ամենուղիղ հորն է:

—Ինչ կա վոր, դրա համար ինձ չպետք է շնորհակալություն հայտնել: Խորհրդային Իշխանությունը հոգում է ինձ համար, իսկ յես ել հոգում եմ նրա համար: Յես աշխատանքից չեմ հեռանա, քանի չի վերջանա յերկրորդ հնգամյակը: Կվերջացնեմ յերկրորդ հնգամյակը, ապա կգամ ու կասեմ—«ընկերներ, կարող եք ինձ հանել աշխատանքից ե ուղարկել հանգստանալու»:

Փիրին լռեց, մի բաժակ թեյ խմեց, սկսեց մյուս բաժակը, բայց ինչ վոր բան հիշեց ու վալեցին նրա աչքերը:

—Հիշում եմ—յերբ մենք յերիտասարդ էյինք ընկճված էյինք ու տխուր, բոլորից վախենում էյինք, վախենում էյինք տերերից, ծերերից, վախենում էյինք մեկս մյուսից: Յերբեք չէյինք ծիծաղում,—ինչ կասեյին մարդիկ, յեթե հանկարծ թուրք յերիտասարդը ծիծաղեր:

Կասեյին, վոր նա խելագար է: Հայերին ե ուսաներին համարում էյինք մեր թշնամիները: Մեզանից վոչ մեկը գրագետ չեր: Իսկ հիմա: Նայեցեք, Բագվում ինչքան նոր դպրոցներ են շինել: Ամիրաջանում, վորտեղ յերբեմն կար միայն 30 աշակերտ, կառուցել են յերկու դպրոց, յերկու ֆարգործու: Այդտեղ սովորում են հազարի չափ տղաներ ու աղջիկներ: Ռազինի բանվորական ավանում կառուցել են այնպիսի հրակայական տուն, վորպիսին վոչ մի միլիոնատեր չի ունեցել: Այդ շենքում տեխնիկումն է տեղավորված:

Սարունչու նոր կայարանի դիմաց կառուցել են մի հսկայական դպրոց իմ մեծ տղան այնտեղ սովորում է, վոր ինժեներ դառնա:

Ո՛ւմ հավար են շինել այդ դպրոցները:

—Մեր յերեխաների համար: Ամեն տեղ կան դպրոցներ, բանֆակներ, տեխնիկումներ, հարյուր հազարավոր պատանիներ աղջիկներ, հասակավոր բանվորներ ե կանայք սովորում են: Ժողովուրդը սովորում է, խելոքանում:

Իսկ ինչքան ուրախ է հիմա մեր յերիտասարդությունը:

Պատանիների սև մադերը քամհարվում են, աչքերը վալում են: Նրանք գնում են զրքերը կոնատակերին, հարատե ծիծաղում, ապրում են հայերի ուսաների հետ յեղբայրորեն:

Ծերունին վոգեվորվում է: Կարծես թե նա վոչ թե պատմում, այլ ինչ վոր գեղեցիկ բանաստեղծությունն է կարդում: Յեվ բոլորը լուռ են: Ծնչները պահած, սեղանի շուրջը հավաքվածները, ուշադրությամբ լսում են թե ինչ է պատմում ծերունի Փիրին:

—Նայում ես նրանց —շարունակում է նա, —արտասուները հոսում ե աչքերիցդ, ուրախություն, բախտավորության արցունքներ են դրանք: Մեր ժողովուրդը յերիտասարդացել է: Նա նոր կյանքով է ապրում, կարծես թե նոր է ծնվել: Լավ է ապրում:

—Յես իմ յերեխաներին ուրիշներից, հարեվանների յերեխաներից տարբերել չեմ կարող: Նրանք բոլորը լավ են, խելոք, դաստիարակված: Յես նրանց, բոլորին սիրում եմ: Ցանկանում եմ բոլորին գրկել, համբուրել ե վորեք լավ բան սովորեցնել նրանց: Ահա թե ինչու յես չեմ գնում հանգստանալու.—իմ փորձը պետք է հաղորդեմ յերիտասարդներին:

Դա պետք է: Մեղ մոտ շատ ե աշխատանքը, եխ, ինչքան աշխատանք կա: Յերբեք աշխատանքը այնքան շատ չի յեղել ինչպես այժմ, Խորհրդային Իշխանությունը որոք:

Յերբեմն, յերբ բանվորի ընտանիքում յերեխա յեր ծնվում, ծնողները լաց էյին լինում. դուրսվում ավելի ծանրանում էր: Պետք էր մի նոր կտոր հաց հայթայթել: Հենց վոր յերեխան մեծանում էր, նրա համար աշխատանք պիտի փնտռել: Ներկայումս կանայք կարող են հանգիստ յերեխա բերել: Խորհրդային Իշխանությունը տալիս է նորածինին անհրաժեշտ սպիտակեղենը, շորեր, դպրոց ե տալիս, համալսարան ու աշխատանք: Հացի մասին նույնպես հարկավոր չէ

մշակել: Յեա պարկում եմ քնելու և հանգիստ եմ. և՛ ինձ և՛ իմ յերե-
խաների համար ամենորոյա հացը կա: Դժվարություններ դեռ կան,
Բայց ուր որի վրա նրանք քչանում են: Յեւ ինչքան լավ աշխատենք:
այնքան քիչ կլինի դժվարությունները:

—Խորհրդային իշխանությունը գոյութիւն ունի ընդամենը 16
տարի, իսկ ինչքան շատ դորձ և կատարված, բոլորովին նոր Բագու յի
կառուցված:

Բոլորովին նոր, խելոք, դաստիարակված ժողովուրդ և աճել: Խոր-
հրդային Իշխանության ժամանակ մեր յերեխաները չեն տեսնի այն
վիշտը, վորը մենք ենք տեսել, յերբ դեռ Խորհրդային Իշխանութիւն
չկար:

—Յեա ծեր եմ, բայց աշխատում եմ լավ աշխատել, վորպեսզի Խոր-
հրդային Իշխանության համար լավ լինի, իսկ յերբ լավ և Խորհրդային
Իշխանության համար, լավ և նաև մեզ և մեր յերեխաների համար:





ԳԻՆԸ 25 Կ.

113

Арм.

2-3146a

П.Б. в Липа
ав. 1934 г.
70

34

Е. Гурвич

Человек меняет жизнь
(Вчера и сегодня)

Баку—Партиздат—1933

Ընթ. 1

ՏՕՂ 1

ՀՀ Ազգային գրադարան



NL0310714

10.955

Apri

2-3146a